Co-funded by the Tempus Programme of the European Union

RETHINKe
□ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԱՎԵԼԻ ԼԱՎ ԵՎՐՈՊԱ□

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ - ԱՁԱԿԻՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ
ԸՆԴԼԱՅՆԵ՛Ք RETHINKe-Ի ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

• Ի՞ՆՉ

➢ Ձեր համալսարանի և եվրոպական համալսարանների (Պորտուգալիայի և Իսպանիայի) միջև համագործակցության ընդլայնում,

➢ Ձեր ուսանողների տեսլականի կստակեցում և զբաղվածության ապահովում:

• Ո՞Վ

ԵՄ ՏԵՄՊՈՒՍ-ի RETHINKe ծրագիրը վերաբերում է բուհերի ուսանողների կրկնակի աստիճանաշնորհմանը. այն է՝ ստանալ հնարավորություն սովորելու Ձեր համալսարանում և Եվրոպական միության տարածքի Ձեր կողմից ընտրված որևէ համալսարանում՝ համատեղելով Ձեր ուսումնառությունը: Այս ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Հայաստանում □Էրազմուս+□ ծրագրի ազգային գրասենյակի աջակցությամբ:

• Ե՞ՐԲ

2017թ. սեպտեմբերի 28-ին, ժամը 11.00-ին՝ հրավիրում ենք Ձեզ՝ մասնակցելու ծրագրային միջոցառմանը, որը տեղի կունենա Երևանում, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում (ք. Երևան, Տերյան 105, 1-ին մասնաշենք, դահլիճ) համապատասխան օրակարգով:

• ԻՆՉՊԵ՞Ս

Տեղեկատվություն կտրամադրվի Հայաստանի Հանրապետության բուհերի այն ուսանողներին, ովքեր ցանկանում են Պորտուգալիայի և Իսպանիայի համալսարանների հետ համագործակցությամբ՝ ստանալ կրկնակի դիպլոմ հետևյալ բնագավառներում.

1. Բնապահպանական գիտություններ
2. Քաղաքացիական ճարտարագիտություն
3. Կլիմայի ճարտարագիտություն

POLITÉCNICO DE LEIRIA
FACULDADE DE ARQUITETURA UNIVERSIDADE DE LISBOA
UNIVERSIDADE DA CORUÑA

4. Ճարտարապետություն / Քաղաքաշինություն

ա. Աշխատաժողով՝ եվրոպական համալսարաններում կրկնակի աստիճանաշնորհման ծրագրով ուսումնառության ոլորտում էլեկտրոնային ուսուցման կիրառման վերաբերյալ:

բ. ԵՄ դասախոսների և Հայաստանի ուսանողների միջև փոխներգործուն երկխոսություն. կրկնակի աստիճանաշնորհման ծրագրին դիմելու և կրկնակի դիպլոմ ստանալու ողջ գործընթացի ամբողջական լուսաբանում:

գ. ՀՀ կրթության և գիտության նախարարության, Էրազմուս+-ի ազգային գրասենյակի, Հայաստանի համալսարանների, եվրոպական համալսարանների, հասարակական կազմակերպությունների և գործատուների միջև համագործակցության ստեղծում՝ երաշխավորելու Հայաստանի բուհերի ուսանողների կրկնակի աստիճանաշնորհման շարունակականությունը:

Մենք պատրաստ ենք պատասխանելու Ձեզ հետաքրքրող բոլոր հարցերին:
Եկեք Ձեր ընկերների հետ միասին:

Մասնակցության համար խնդրում ենք գրանցվել՝
http://sites.ipleiria.pt/rethinke
Մանրամասների համար գրե՛ք մեզ հետևյալ էլ. փոստով՝ iro@gsu.am

ԵՄ ՏԵՄՊՈՒՍ RETHINK ծրագրային թիմ
Ծրագրի համարը՝ 544178-TEMPUS-1-2013-1-PT-TEMPUS-JPCR